ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ դասախոս Մարգսյան Գյուլնարա Մարգսի

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Աշխատանքային իրավունքի արդի հիմնախնդիրները

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք» (հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դասընթացի անոտացիան

«Աշխատանքային իրավունքի արդի հիմնախնդիրները» դասընթացն ուղղված է աշխատանքային իրավունքի ժամանակակից մարտահրավերների ճանաչմանը, ուսանողների մոտ դրանց արդյունավետ լուծումների համար անհրաժեշտ մասնագիտական վերլուծական կարողությունների ձևավորմանը: Դասընթացի շրջանակում ուսանողներն ուսումնասիրելու են աշխատանքային իրավունքի զարգացման միտումները, աշխատանքի շուկայի փոփոխությունները, աշխատանքային պայմանագրերի, համաձայնագրերի, ներքին և անհատական իրավական ակտերի ճկուն ձևերը, թվայնացումը, աշխատանքի վարձատրությունը, երաշխիքներն և հատուցումները, աշխատողների իրավունքների պաշտպանությունը և այլ հարցեր:

Դասընթացի նպատակը և խնդիրները

«Աշխատանքային իրավունքի արդի հիմնախնդիրները» դասընթացի նպատակն է ուսանողներին տրամադրել ինչպես տեսական, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ գիտելիքներ, զարգացնել գործնական հմտություններ՝ աշխատանքային իրավունքի ոլորտում առկա արդի խնդիրների ճանաչման, վերլուծության և արդյունավետ լուծումների մշակման ուղղությամբ: Դասընթացը միաժամանակ նպատակ ունի խթանել իրավաբանական քննադատական մտածողության ձևավորումը՝ կենտրոնանալով աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունների, օբյեկտիվ իրականությունում ծագող իրավիճակային խնդիրների լուծման վրա:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

Դասընթացի խնդիրներն են՝ ուսանողներին ծանոթացնել աշխատանքային իրավունքի առկա տեսական և գործնական խնդիրներին: Մասնավորապես՝

- ✓ Ուսումնասիրել աշխատանքային օրենսդրության զարգացման ժամանակակից միտումները Հայաստանի Հանրապետությունում, Ռուսաստանի Դաշնությունում և այլ երկրներում:
- ✓ Ուսումնասիրել առանձին բնագավառներում աշխատանքային հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները:
- ✓ Դիտարկել աշխատանքային իրավահարաբերությունների կազմակերպման առանձին ձևերի (հեռավար աշխատանք, ոչ լրիվ աշխատաժամանակի կիրառմամբ ճկուն զբաղվածություն և այլն) իրավական կարգավորման առանձնահատկությունները:
- ✓ Ձևավորել իրավական վերլուծություն իրականացնելու, իրավաբանական եզրակացություններ և առաջարկություններ պատրաստելու հմտություններ՝ ուղղված աշխատանքային օրենսդրության կատարելագործմանը:

- ✓ Ուսումնասիրել աշխատողների իրավունքների պաշտպանության իրավական մեխանիզմները՝ թվայնացման և փոփոխվող աշխատաշուկայի պայմաններում:
- ✓ Վերլուծել աշխատանքային իրավունքի կիրառման վիճահարույց հարցերը:
- ✓ Զարգացնել գործնական իրավական խնդիրների և վեճերի արդյունավետ լուծման կարողություններ:

Դասընթացի օբյեկտն և առարկան

Դասընթացի օբյեկտն է աշխատանքային և դրանց հետ անմիջականորեն կապված այլ իրավահարաբերությունները, որոնք կարգավորվում են աշխատանքային իրավունքի նորմերով:

Դասընթացի առարկան են աշխատանքային իրավունքի արդի տեսական ու կիրառական խնդիրները, դրանց լուծման իրավական մեխանիզմները, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորման զարգացման միտումներն ու մարտահրավերները ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում:

Դասընթացի մուտքային պահանջները

Սկսելով դասընթացը՝ ուսանողները պետք է ունենան գիտելիքներ և հմտություններ աշխատանքային իրավունքի ոլորտում:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Աշխատանքային հարաբերությունների կարգավորման ժամանակակից միտումները և զարգացումները:
2. Աշխատանքային օրենսդրության արդի խնդիրները, իրավաբանական պրակտիկայում դրանց արտացոլման ձևերը:
3. Աշխատանքային հարաբերությունները կարգավորող ազգային և միջազգային իրավական ակտերի նշանակությունը և փոխազդեցությունը:
4. Աշխատանքային վեճերի լուծման արդի մեխանիզմները՝ ներառյալ դատական և արտադատական կարգով:

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***
    1. Կարող է խորացված հետազոտել և վերլուծել աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրական նորմերի պահանջները:
    2. Կարող է կազմել աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող փաստաթղթերի նախագծեր:

3. Կարող է աշխատել աշխատանքային օրենսդրության, ինչպես նաև դատական պրակտիկայի նյութերի հետ:

4. Կարող է գտնել գործնական խնդիրների վերլուծության և լուծման ուղիներ, ներկայացնել առաջարկություններ և կազմել եզրակացություններ:

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Կարող է կիրառել կոնկրետ իրավիճակում տեսական գիտելիքները, օրենսդրական նորմերը, համադրել կոնկրետ իրավիճակը ձևավորված դատական պրակտիկայի հետ:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝***

1. Ունակ է վերլուծական և հետազոտական խնդիրներ լուծելու համար օգտագործել ժամանակակից իրավական համակարգեր:

2. Ունակ է անհրաժեշտ իրավական տվյալները հավաքելու, դրանք վերլուծելու և առաջացած իրավիճակի վերաբերյալ իրավական կարծիք պատրաստելու:

3. Տիրապետում է ներքին իրավական ակտերի մշակման տեխնիկային:

4. Ունակ է ճիշտ և լիարժեք արտացոլել մասնագիտական գործունեության արդյունքները իրավական և այլ փաստաթղթերում:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասընթացներն անցկացվում են դասախոսությունների և սեմինարների ձևով: Դասախոսությունների ժամանակ ներկայացվում է հետազոտվող հարցերի ընդհանուր նկարագրությունը, բացահայտվում են հիմնական հասկացություններն ու եզրույթները, արդի խնդիրները, ներկայացվում են իրավական և գիտական աղբյուրների ընդհանուր բնութագրությունը և տրվում է ինքնուրույն աշխատանքի առաջադրանք:

Սեմինարների ընթացքում ուսանողները ծանոթանում են ուսումնասիրվող թեմայի տեսական մասին, այդ թվում՝ քննարկվող հարցերի վերաբերյալ թեզիսների պատրաստման միջոցով, և գործնականում կիրառում են աշխատանքային իրավունքի նորմերը՝ լուծելով խնդիրներ և կազմելով փաստաթղթեր աշխատանքային և այլ անմիջականորեն կապված հարաբերությունների ոլորտում:

Մագիստրոսական ծրագրի յուրացման հիմնական ձևը ուսանողի ինքնուրույն աշխատանքն է: Ուսանողը ներկայանում է սեմինարների՝ պատրաստելով ելույթներ, լուծելով խնդիրներ և պատրաստելով աշխատանքային հարաբերությունները կարգավորող փաստաթղթեր:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է բլոկում (18 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 10 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1-ին ուսումնական տարվա 2-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**18**
1.1.1. Դասախոսություններ	**8**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝սեմինարներ, իրավիճակային խնդիրների լուծում	**10**
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**86**
1.2.1. Քննություններին/ստուգարքներին նախապատրաստում	**40**
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	**46**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	***Գործնական*** **ինքնուրույն աշխատանք/փաստաթղթերի կազմում/, սեմինար պարապմունքներ**
1		**3**	**4**
Թեմա 1. Աշխատանքային իրավունքի ընդհանուր մասի արդիական հարցերը	**3**	**2**	**1**
Թեմա 2. Խտրականությունը աշխատանքի բնագավառում	**2**	**1**	**1**
Թեմա 3. Ներքին իրավական կարգավորման առանձնահատկությունները և դերը արդի պայմաններում:	**2**	**1**	**2**
Թեմա 4. Աշխատանքային հարաբերությունները կարգավորող պայմանագրերը:	**2**	**1**	**1**

Թեմա 5. Աշխատանքի վարձատրություն: Երաշխիքներ և հատուցումներ:	**3**	**1**	**1**
Թեմա 6. Աշխատաժամանակ, հեռավար աշխատանքը ժամանակակից պայմաններում. օրենսդրական կարգավորումները:	**2**	**1**	**2**
Թեմա 7. Պատասխանատվությունը աշխատանքային իրավունքում. կարգապահական, նյութական պատասխանատվություն:	**4**	**1**	**2**
Թեմա 8. Աշխատանքային իրավունքների պաշտպանության մեթոդները: Աշխատանքային վեճերի առանձնահատկությունները	**4**	**2**	**2**
Ընդամենը	**18**	**8**	**10**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Աշխատանքային իրավունքի ընդհանուր մասի արդիական հարցերը Աշխատանքային իրավունքի առարկան, մեթոդը և համակարգը: Աշխատանքային իրավունքի սկզբունքները՝ որպես ելակետային դրույթներ, որոնք արտացոլում են աշխատանքային իրավունքի էությունն և բովանդակությունը:

Աշխատանքային իրավական նորմերի կիրառումն անալոգիայով, աշխատանքային օրենսդրության նորմերի մեկնաբանման սկզբունքները, օտարերկրյա իրավունքի կիրառումը:

Թեմա 2. Խտրականությունը աշխատանքի բնագավառում

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է խտրականության արգելք աշխատանքի բնագավառում որպես ՀՀ աշխատանքային իրավունքի կարևորագույն սկզբունք, ինչը նշանակում է, որ ոչ ոք չի կարող սահմանափակվել իր աշխատանքային իրավունքներով և ազատություններով կամ ստանալ որևէ արտոնություն՝ հիմնվելով սեռի, ռասայի, մաշկի գույնի, ազգության, լեզվի, ծագման, գույքի, տարիքի, բնակության վայրի, կրոնի նկատմամբ վերաբերմունքի, համոզմունքների, ինչպես նաև այլ հանգամանքների հիման վրա, որոնք *կապված չեն աշխատողի գործնական հատկանիշների հետ:*

Աշխատանքի բնագավառում խտրականության արգելքի սահմանումը միջազգային իրավական ակտերում:

Թեմա 3. Ներքին իրավական կարգավորման առանձնահատկությունները և դերը արդի պայմաններում:

Ներքին իրավական ակտերն ընդունվում են կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքի (հերթափոխային) և հանգստի ժամանակացույցերը (գրաֆիկները) հաստատելու, աշխատողներին արտաժամյա աշխատանքի և հերթապահության ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Ներքին կարգապահական կանոնները, անձնական տվյալների պաշպանության վերաբերյալ կանոնակարգը, աշխատավարձի և պարգևավճարների վերաբերյալ կանոնակարգը և այլ ներքին իրավական ակտեր, որոնք կարգավորում են աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները:

Թեմա 4. Աշխատանքային հարաբերությունները կարգավորող պայմանագրերը:

Աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը: Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց հետ աշխատանքային հարաբերությունների ծագման առանձնահատկությունները:

Աշխատանքային պայմանագրի կնքման նախադրյալները, պահանջվող փաստաթղթերը, փորձաշրջանը: Աշխատանքային պայմանագրի հասկացությունը, առանձնահատկությունները և տարբերությունը քաղաքացիաիրավական պայմանագրից:

Աշխատանքային պայմանագրի և աշխատանքային պայմանագրի հավելվածի կնքման կարգը (թվայնացման գործընթացները):

Կոլեկտիվ պայմանագիրը, որպես աշխատանքային հարաբերությունները կարգավորող փաստաթուղթ:

Աշխատանքային պայմանագրի լուծման օրենսդրությամբ սահմանված ընթացակարգային առանձնահատկությունները՝ կախված պայմանագրի լուծման հիմքերից (կողմերի համաձայնությամբ, գործատուի նախաձեռնությամբ, աշխատողի նախաձեռնությամբ, աշխատողի և գործատուի համաձայնությամբ սահմանված փորձաշրջանի արդյունքներով, օրենքով նախատեսված այլ հիմքերով):

Թեմա 5. Աշխատանքի վարձատրություն: Երաշխիքներ և հատուցումներ:

Աշխատավարձի հասկացությունը, կառուցվածքը (*հիմնական* աշխատավարձ, կատարած աշխատանքի դրվող տրված *լրացուցիչ* (հիմնական աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ և պարգևատրումներ)աշխատավարձ):

Աշխատանքի վարձատրությունը աշխատանքի *նորմալ պայմաններից շեղումների դեպքում* (արտաժամյա աշխատանք**,** գիշերային աշխատանք, հանգստյան և ոչ աշխատանքային (տոնական և հիշատակի օրերին) կատարվող աշխատանք, աշխատանքի ծավալի ավելացում): Վճարումը պարապուրդի ժամանակ Աշխատավարձ վճարելու կարգը, պահումներ կատարելու սահմանափակումները:

Հատուցումներ. Մասնագիտական ուսուցման ընթացում պարտադիր առողջության ստուգման, լրացուցիչ հատուկ ընդմիջումների, գործուղումների ընթացքում, ինչպես նաև աշխատանքի կատարումից հիմնավորված հրաժարվելու դեպքում աշխատողին վճարվում է հատուցում օրենսդրությամբ սահմանած չափով (հատուցվում են ծախսերը):

Երաշխիքներ. Աշխատավարձի նվազագույն չափ, օրինական գործադուլին մասնակցող աշխատողների, հղի կանանց և երեխա խնամող աշխատողների երաշխիքները, մասնագիտական հիվանդություն և աշխատանքային խեղում ստացած, ժամանակավոր անաշխատունակ դարձած աշխատողի երաշխիքներ, ինչպես նաև սոցիալ-աշխատանքային լրացուցիչ երաշխիքներ, որոնք աշխատանքային հարաբերության կողմերը համարում են անհրաժեշտ:

Թեմա 6. Աշխատաժամանակ, հեռավար աշխատանքը ժամանակակից պայմաններում. օրենսդրական կարգավորումները:

Աշխատաժամանակի կառուցվածքը, աշխատաժամանակի տևողությունը, տեսակները (նորմալ, կրճատ, ոչ լրիվ), աշխատաժամանակի գումարային հաշվարկը, օրվա և շաբաթվա ընթացքում անընդմեջ հանգստի տևողությունը:

Հեռավար աշխատանքի էությունը, կատարվող աշխատանքի բնույթի առանցքային լինելը, օրենսդրական բնորոշումը:

Հեռավար աշխատանքի իրավական հիմքերը, իրականացման կարգն ու պայմանները, աշխատաժամանակի հաշվառման կազմակերպումը:

Թեմա 7. Պատասխանատվությունը աշխատանքային իրավունքում. կարգապահական, նյութական պատասխանատվություն:

Կարգապահական պատասխանատվությունը. աշխատանքային կարգապահության խախտման օրենսդրական բնորոշումը, կարգապահական պատասխանատվության հիմքը: Կարգապահական խախտման համար գործատուի կողմից կիրառվող տույժերի տեսակները: Օրենքով չնախատեսված կարգապահական տույժերի կիրառման արգելքը: Օրենքով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծումը որպես կարգապահական տույժի տեսակ:

Հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենքներով կարգապահական պատասխանատվությանն առնչվող օրենսդրական կարգավորումների առանձնահատկությունը (պաշտոնի անհամատեղելիություն, շահերի բախման դեպքեր, վարքագծի կանոնների խախտումներ):

Նյութական պատասխանատվություն. առաջացման հիմքերը, պայմանները, տուժողի մեղքը, հատուցման ենթակա վնասի չափի որոշումը:

Գործատուի նյութական պատասխանատվության առաջացման դեպքերը, պատճառված վնասի հատուցումը:

Աշխատողի նյութական պատասխանատվության դեպքերը, պատասխանատվության սահմանները, լիակատար նյութական պատասխանատվության պայմանագիրը, աշխատողների կողմից լրիվ ծավալով վնասի հատուցման դեպքերը:

Թեմա 8. Աշխատանքային իրավունքների պաշտպանության մեթոդները: Աշխատանքային վեճերի առանձնահատկությունները:

Աշխատողների իրավունքների պաշտպանության հիմնական մեթոդները ՀՀ աշխատանքային իրավունքի համակարգում: Արհեստակցական միությունների, պետական

վերահսկողություն իրականացնող մարմինների դերը աշխատողների իրավունքների պաշտպանության գործում:

Աշխատանքային վեճի հասկացությունը, տեսակները (կոլեկտիվ, անհատական): Աշխատանքային վեճեր քննող մարմինը, աշխատանքային վեճերի հաշտարարությունը: Աշխատանքի պայմանների փոփոխման կամ աշխատանքային հարաբերությունների դադարեցմանն առնչվող անհատական աշխատանքային վեճերը:

Դատական կարգով աշխատողի խախտված իրավունքների վերականգանում. հարկադիր պարապուրդի ժամանակահատվածում գործատուի կողմից աշխատողին վճարման, ինչպես նաև աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց տրվող հատուցման հետ կապված օրենսդրական պահանջների ապահովումը:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1.ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունված 09.11.2004թ.:
2.ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ Սահմանադրական օրենքը, ընդունված 07.02.2018թ.:
3.Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, ընդունված 06.12.1985 թ:
4. <Հանրային ծառայության մասին> օրենք, ընդունված 23.03.2018 թ.:
5.Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենք, ընդունված 20.05.2013թ.:
6.Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիա, 1953թ.:
7.Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիա, 1950թ.:
8.Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունված և հռչակված գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ի 217 A (III) բանաձևով:
9.Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա, ընդունվել է Եվրոպայի խորհրդի կողմից 04.11.1950թ.:
10. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունված է ՄԱԿ-ի կողմից 16.12.1966թ.:
11. Աշխատանքի եւ զբաղվածության բնագավառում խտրականության մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության № 111 Կոնվենցիա, ընդունված է 04.06.1958թ.:
12. Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրման մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության № 100 Կոնվենցիա, ընդունված է 06.06.1951թ:
13. Խորհրդի 2000 թվականի նոյեմբերի 27-ի Աշխատանքի, մասնագիտական վերապատրաստման ու առաջխաղացման և աշխատանքային պայմանների մասով տղամարդկանց և կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը կիրառելու մասին 2000/78/ԵՀ հրահանգ:

14. Զոհրաբյան Լ., Աշխատանքային վեճերի հասկացությունը և հատկանիշները, Պետություն և իրավունք, N 1 (71), 2016:
15. Կարապետյան Մ., Աշխատանքային միգրացիայի՝ որպես միգրացիայի հիմնական տեսակի առանձնահատկությունները, Պետություն և իրավունք, N 4 (50), 2010, ԵՊՀ, Երևան, 2010թ.:
16. Մկրտչյան Ա., Իրավունքի և տեղեկատվական տեխնոլոգիաների խաչմերուկը՝ անձնական տվյալների պաշտպանության համատեքստում, Երևան, 2023:
17. Պետրոսյան Գ., ՀՀ Աշխատանքային իրավունք, ԵՊՀ, Երևան «Հայրապետ» հրատ., 2020:
18. Տոնոյան Ա., Աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտը ՀՀ-ում, Օրինականություն N 120, 2020, Երևան:
19. Гармонщиков А., Дулатов М., Дискриминация по признаку инвалидности в трудовых отношениях, Достижения науки и образования, 2022.
20. Гусов К., Толкунова В., Трудовое право России, Учебник, ТК Велби, Изд-во Проспект, Москва, 2005, с. 61.
21. Жилкина Е., Вопросы соблюдения прав граждан на безопасные условия труда International Journal of Humanities and Natural Sciences, vol.11-1 (38), 2019, с. 148
22. Иванян И.Г. Международно-правовые нормы по оплате труда и их соотношение с российским законодательством, Право: теория и практика, 2008, № 11-12.
23. Избиенова Т. Защита работников от дискриминации по причине их принадлежности к профессиональным союзам (на примере РФ и РА), Бюллетень ЕГУ Юриспруденция, 144.3, 2014 (№ 3) б.
24. Коропятник П. Проблемы реализации права на труд и свободу труда, Экономика и социум №12(31) 2016.
25. Леньшин А. Реализация принципа недопущения дискриминации в законодательстве стран ЕЭАС, Вестник Университета имени О.Е. Кутафина (МГЮА), 10 (2017).
26. Лушников А. Проблемы дифференциации в правовом регулировании отношений в сфере труда (доклад на Пятой Международной научно-практической конференции 27 - 30 мая 2009 г.), Юридическое образование и наука, 2009, № 3.
27. Мацкевич О., Приженникова А., А. Буянова, Трудовое право России, Учебник для бакалавриата, Москва, 2022.
28. Муродова Д. Причиы и условия возникновения трудовой миграции, Экономика и социум №10(101)-2 2022.
29. Офман Е. Злоупотребление правом субьектами трудовых отношений: Автореферат диссертации на соискание ученой степени канд. юрид. наук. Екатеринбург, 2006, с. 8.
30. Сизова О., Кузьмин В. Проблема дискриминации в трудовом праве, Инновационная экономика: Перспективы развития и совершенствования, №2 (36), 2019, с. 480.
31. Солдаткин Д.В. Способы защиты от проявлений дискриминации в сфере труда: Автореф. дис.. канд юрид. Наук, М., 2006.

32. Фомина Л., Международные стандарты защиты персональных данных в условиях информационного общества// Международное право, 2019, № 4 https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodnye-standarty-zaschity-personalnyh-dannyh-v-usloviyah-informatsionnogo-obschestva/viewer
33. Чуксина В., Комиссаров Н. Дискриминация по признаку инвалидности в трудовых отношениях, Право и законодательство, Известия Иркутской государственной экономической академии. 2015. Т. 25, № 1, с. 127.